

## ԶԵՅԹՈՒՆԻ ԵՐԿԵՐ

Ա. Ս. ՂԱԶԻՅԱՆ

XIX դարում թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական կռիվները առատ նյութ են տվել բանահյուսության տեսականերից հատկապես երգերին, որոնց մեջ յուրահատուկ տեղ են դրավում Զեյթունի երգերը, մի հանդամանք, որը պայմանավորված է Զեյթունի դրաված տեղով ու նշանակությամբ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի դորժում:

Զեյթունն ունեւր անկախության և ազատության համար մղված կռիվների դարավոր ավանդներ և կարողացել էր մինչև XIX դարի 60-ական թվականները պահպանել իր կիսանկախ դրությունը: Շրջապատի քոչվոր, կիսավայրենի աշիրեթներն ու ցեղերը մի կողմից, թուրքական բռնակալությունը մյուս կողմից զեյթունցուն ստիպել են լինել միշտ ղդոն ու զինված, պատրաստ պատերազմների: XVIII դարի 80-ական թվականներից մինչև XIX դարի 50-ական թվականները Զեյթունի վրա ձեռնարկվել են ավելի քան 30 արշավանք դանադան աշիրեթների ու թուրքական կառավարության կողմից, որոնք մեծ մասամբ վերջացել են զեյթունցիների հաղթանակով<sup>1</sup>: Զեյթունի ազատամարտերի պսակը կազմում են 1862 և 1895—96 թթ. կռիվները, որոնք իրենց վրա դարձրին եվրոպական մամուլի, մտավորականության ու դիվանագիտության ուշադրությունը: Իսկ հայ ժողովրդի համար Զեյթուն անունը դարձավ քաջամարտիկի, հերոսի ու հայրենասիրության հոմանիշ: Անկախության և ազատության համար մղված անդադար պայքարը խորապես ազդել է զեյթունցու հոգեբանության, կյանքի, կենցաղի, զբաղմունքների ու արհեստների վրա: Պատերազմի դաշտում ընկնելը զեյթունցին ղիտել է իբրև մի բնականոն, անհրաժեշտ երևույթ և ալն հաստատել է. «Կռիվը երբեք ձրի չէ, եզր կմեռնի՝ կաշին կը ձգե, քաջը կը մեռնի՝ անունը կը ձգե»<sup>2</sup>: Ընդունված ծեսին հակառակ պատերազմում նահատակվածի վրա կոծ չեն արել՝ նրա հիշատակը չվիրավորելու համար<sup>3</sup>: Զեյթունցու համար ամենամեծ փառքը եղել է ժողովրդական երգիչների ուշադրությանն արժանանալը և ամենամեծ անսլատվությունը՝ թշնամուն թիկունք դարձնելը. «էկյար ես տուշմունրս կոռնոկ ղառցընիմ նը՝ չիւր կոծիծ թուղ նըմ»<sup>4</sup> երգվել է նա:

Զեյթունի սուրբ Հովհաննես եկեղեցում պահվել է մի ավետարան՝ սուրբ Բարսեղի անունով, որի վրա ուխտ էին անում կռվի զաշտ զնացող զեյթունցիները, նույնիսկ երբեմն էլ տանում էին իրենց հետ՝ իբրև հաղթանակի դրավական<sup>5</sup>: Զեյթունցիները ունեին նաև պատերազմի իրենց հովանավոր սուրբը:

<sup>1</sup> Վ. Մ ե լ ի թ ս ե թ յ ա ն, Զեյթունի հերոսամարտեր, Երևան, 1960, էջ 24:

<sup>2</sup> «Զեյթունի պատմագիրք», Բունեսու—Այրես, 1960, էջ 822:

<sup>3</sup> Զ ե յ թ ու ն ց ի, Զեյթունի անցյալն և ներկայն, Փարիզ, 1903, մ. Բ, էջ 149:

<sup>4</sup> Հ. Ա լ լ ա հ Վ ե Ր ղ յ ա ն, Ուլնիա կամ Զեյթուն, Կ. Պոլիս, 1884, էջ 130:

<sup>5</sup> «Զեյթունի պատմագիրք», էջ 108, 150:

Զեյթունը տեղացիների կողմից կոչվում էր գեղ. թևավոր խոսք կար  
այդ առթիվ. «Գեղ, աթրմ տեղ»<sup>6</sup>. Այս խոսքի իմաստն այն է, որ Զեյթունը  
բռնկվելու պատրաստ վառող է: Զեյթունի թաղերից մեկը, որը կառավարվում  
էր Յաղուկյան տոհմի կողմից, կոչվում էր Գարկլար, այն է տեղավոր (թուր-  
քերեն): Զրույցն ասում է, թե Օմուր փաշայի պարտությունից հետո 1780 թ.  
պատերազմից մնացած ավարը Սուրենյան իշխանը բաժանեց ղեյթունցիներին,  
տեղերը ըստ ընկան վարի թաղեցիներին, և այդ թաղը այնուհետև կոչվեց  
Գարկլար<sup>7</sup>:

Կիրիկիայում զեյթունցիները վայելել են քաջ ու վերին աստիճանի հանդուգն մարդկանց համբավ: 1852—53 թթ. Կիրիկիա այցելած ֆրանսիացի հայագետ Վ. Լանգլուան գրում է. «Սորանից մի քանի տարի առաջ այս լեռնաբնակները դեսպաններ էին ուղարկել Կոստանդնուպոլիս, որպեսզի իրանց և օսմանյան տերության միջումը մի անկատար մնացած գործ ավարտեն: Իմ բարեկամներից միներ, որ առիթ էր ունեցել այս լեռնական դեսպանության անդամները տեսնելու, ասում էր, թե հաղար զեյթունցի կարող էին Կարամանիան տակն ու վրա անել, թե տիրապետության դիտավորություն ունենային, այս բանիս, ուղիղն ասեմ, ես էլ հավատում եմ»<sup>8</sup>: Զեյթունցիները տիրապետելու դիտավորություն չեն ունեցել, նրանց մղած կռիվները կրել են դերազանցապես ինքնապաշտպանական բնույթ:

Զեյթունի ազատամարտերը փառաբանվել են հայ նշանավոր բանաստեղծների ու գրողների կողմից: Բավական է հիշատակել միայն Մ. Պեշիկթաշլյանի բանաստեղծությունները՝ «Հալ քաջորդին», «Մահ քաջորդվոյն», «Թաղումն քաջորդվոյն», որոնք գրված են 1862 թ. դեպքերի անմիջական ազդեցությամբ: Ինչ վերաբերում է Զեյթունի ժողովրդական աշուղական երգերին, ապա նրանց համար անսպառ նյութ են տվել Զեյթունի ազատագրական կռիվներու երգեր ստեղծվել են ամեն քիչ թե շատ նշանավոր գործչի, դեպքի, գինված ընդհարման շուրջը<sup>1</sup>:

Այս երգերի վրա ուշադրություն են դարձրել նույնիսկ օտարազգի ճանապարհորդները, նրանց անվանելով ռազմական, պատերազմական. «Խսկ շորեցուն երիտասարդացն խոժոռ աշոք հայեցյալ ի գինապահս ուղևորացն՝ յուղի անկան, ղիւրեանց ռազմականն սկսանելով երգել, նուազ յորմն և երիվարք մեր, ասե, վառեցան յաշխոյժ խրոխտական», քաղվածաբար մեջ է բերում Ալիշանը ֆրանսիացի մի ճանապարհորդի ուղեգրությունից<sup>10</sup>։

Զեյթունի ռազմական, պատերազմական երգերը հրատարակվել են առաջին անգամ ՄՆ. Սեմերճյանի կողմից, նրա «Զեյթունի անցյալին և ներկային» աշխատության մեջ, որի Ա մասը լույս տեսավ 1900 թ. Վիեննայում, իսկ Բ-ն՝ 1903 թ. Փարիզում։ Այս աշխատությունը բանահյուսական, բանագիտական, և, սակայն պարունակում է արժեքավոր ու հետաքրքիր նյութեր՝ երգեր, զրույցներ, ավանդություններ։ Հեղինակը այդ նյութերն օգտագործում է պատմական այս կամ այն փաստը լուսաբանելու համար։ Քանի որ հետաքրքրության առարկա երգերը հորինվել ու կենցաղավարել են թուրքերեն,

6 Հ. Այլ ազգերի և, Ուկրաինայի Զեյթուն, Կ. Պոլիս, 1884, էջ 143:

7 «Հուշիկը Զեյթունի», Մարգարան, 1912, էջ 11, 45:

7 «Հուլիսի 29-ին, 1862, իշ. 11, 43»  
8 «Հուլիսի 29-ին, 1862, իշ. 11, 43»

9 «Մուրճ», 1901, № 11, «Զեյթունը XIX դարում», հոդվածը

10 Ղ. Այրազան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 190:

ապա հեղինակը կից տալիս է հայերեն գոհացուցիչ թարգմանությունը, որը և շարունակում է մեր կողմից:

1912 թ. Մարզվանում հրատարակած «Հուլիկա Զեյթունի» գրքում ղեկավարված է ևս երկու երգ, և ավելի ուշ 1960 թ. Բուենոս-Այրեսում հրատարակած «Զեյթունի պատմագրքում» նույնպես կան մի շարք երգեր, դարձյալ թուրքերեն, հատուկտոր հայերեն թարգմանությամբ, որոնք, սակայն, նոր բան չեն ավելացնում հնի վրա:

Հրապարակված երգերը հետևյալներն են. «1780-են սկսյալ» հեղինակ աշուղ հալիլ. «Խուրշետ փաշայի հարձակման տասթանը», հեղինակ չի նշվում, «Ազիզ փաշայի տասթանը», հեղինակ՝ Ղուլ-հայալ, «Պապիկ փաշայի վրա», հեղինակ էլֆագ (?), «Վեյսի փաշայի տասթանը», հեղինակ չի նշվում, «Զեյթունի տեսթանը», հեղինակ չի նշվում, «Զեյթունի գովասանքը», հեղինակ՝ աշուղ Ֆերրի, «1895 թ. Մեծ պատերազմի տասթանը», հեղինակ Ղուլ-Տավուտ (երգը գրի է առել զեյթունցի Ասատուր աղա Պալճյանը), «Զեյթունի տեսթանը» (Թուրքեր և զեյթունցիներ), հեղինակ՝ Կարապետ Տեր-Հակոբյան, 1895—96 թթ. կոիվների ժամանակ նշանավոր դեր խաղացած մի մարդ, Տելի-Քեշիշի տոհմից: Բացի թվարկած երգերից, Վ. Լանգլուան ֆրանսերենի և թարգմանել և (հայտնի չէ հայերենից, թե թուրքերենից) և հրատարակել մի երգ Խուրշիդ փաշայի հարձակման մասին. «Վազեցեք, եղբայրներ, եկեք լսելու մեր քաջությունների պատմությունը» սկզբնատողով: Քանի որ չկա երգի բնագիրը, ապա այն քննարկվում է ըստ Հ. Առաքելյանի հայերեն թարգմանության<sup>11</sup>: Անշուշտ, Զեյթունի ռազմի երգերը վերը թվարկածով չեն սահմանափակվում:

Այժմ տեսնենք, թե պատմական ինչ անցքեր են հիմք հանդիսացել Զեյթունի երգերի համար:

1780 թ. մինչև անցյալ դարի 40-ական թվականների ինքնապաշտպանողական կոիվների մասին է պատմում «1780-են սկսյալ» վերնագրով երգը: Այսպես, երգի մի քառատողը պատմում է 1780 թ. Օմուր փաշայի Զեյթունի վրա ձեռնարկած արշավանքի հետ կապված մի դրվագի մասին: Օմուր փաշան այս ընդհարման ժամանակ սպանվեց, զորքը փախուստի մատնվեց, պատերազմի դաշտում թողնելով մեծ ավար: Այսպես, երգը հակիրճ պատմում է 1782 թ. Ալի փաշայի, 1808 թ. Ղալենդեր փաշայի, 1829 թ. Քյոսե փաշայի հարձակումների, ղինված ընդհարումների հետ կապված դեպքերի մասին:

50-ական թվականներին Զեյթունի պայքարը անկախության համար շարունակվում էր ընդդեմ սաստկացող աղգային հալածանքի և տնտեսական ճնշումների, որ կիրառվում էին սիստեմատիկաբար Զեյթունի հայ համայնքի նկատմամբ օսմանյան պետության կողմից՝ ի դեմս Մարաշի կուսակալների: Այս շրջանի դեպքերի մասին պահպանված է երկու երգ՝ «Խուրշեդ-փաշայի դաստանը» և Վ. Լանգլուայի հրատարակածը: 1860 թ. հունիսին Մարաշի կուսակալ Խուրշիդ փաշան բանակ դրեց Զեյթունից ու հեռու՝ Զիհան գետի ափին, պահանջեց անցած տարիների հարկը և հպատակություն: Զեյթունի միացյալ ուժերը պարտության մատնեցին Խուրշիդ փաշայի ղորքին և նա հալիվհագ փախավ Մարաշ:

<sup>11</sup> Հ. Առաքելյան, Զեյթուն, 1896, Թիֆլիս, էջ 77—78:

1862 թ. Խուրշիդ փաշայի հաջորդ՝ Ազիզ փաշան Զեյթունի հարցը մեկընդ-միջտ ասպարեզից վերացնելու նպատակով ավելի մեծաքանակ զորքով հար-ձակվեց Զեյթունի վրա։ Զեյթունցիները իրենց արծվաբույնը պաշտպանեցին անօրինակ բաջուժյունների և զոհաբերությունների դնով։

Ազիզ փաշան եկավ թնդանոթ լարեց,  
Քառասուն մեկ ուսմբ նետեց, մի էշ գլտորեց...<sup>12</sup>

հեզանքով հիշատակված է այդ մասին երգում։ Այս կոիվների շուրջը հյուսված են եղել շատ երգեր, բայց պահպանված է մեկը՝ «Ազիզ փաշայի տասթանք»։ Այստեղ նորութուն են չերեզները, որոնց մասին երգում հիշատակություն կա։ Զոհաբերությունն այն է, որ Ազիզ փաշան խոստացել էր Զեյթունի հայ համայնքը ոչնչացնելուց հետո Զեյթուն գավառա-կը չերեզներին առ՝ իբրև մշտական բնակության վայր<sup>13</sup>։ Այս կոիվների ժա-մանակ չերեզները շարաշար պարտվեցին. «Չերեզը ջարդվեցան Գրգրեի բեռփրին»<sup>14</sup> ասվում է այդ մասին երգում։

1870—80-ական թվականների ղեպերը կապված են գլխավորապես Պապիկ Ենիտյունյանի անվան հետ։ Նա կարողացավ անձնական բաջության, հմտության շնորհիվ իր շուրջը համախմբել դիմադրող ուժերին։ Պապիկ Ենիտ-յունյանի զործունեությունը մասին պահպանված են երկու երգ. մեկը՝ «Էվլեք» կամ «Վեյսի փաշային տասթանք», մյուսը՝ «Պապիկ փաշայի վրա»։ Մարաշի կուսակալությունը հանձին կուսակալ Վեյսի փաշայի, բոլոր միջոցներով աշխա-տում էր սիրաշահել Պապիկին, որը ժողովրդից մեծարվում էր փաշա տիտղո-սով։ Այս հանգամանքը արտացոլվել է նաև երգերում։ Պապիկ փաշան մերժում է կառավարական պաշտոններն ու շնորհները, միշտ հավատարիմ մնալով իր հայրենիքի շահերին։ Երգերում հիշատակվում են բազմաթիվ ղեպեր այս հերոսի կյանքից. նշենք մի Երկուսը։

Զեյթունի թուրք ղատավորը և զայմագամը ոտնձգություն են անում ղեյ-թունցիների դեմ, նախազգուշացումները մնում են անհետևանք, այն ժամա-նակ Պապիկ փաշան երկուսին էլ երեք օր պահում է աղբի պարկի մեջ՝ իբրև պատիժ<sup>15</sup>։

Աղբի պարկին մեջ գրի բռն ղատավորը<sup>16</sup>։ 1876 թ. Զեյթունը պաշարվում է մահմեդական աշիրեթների կողմից։ Կտըր-վելով գրսից, ժողովուրդը սննդամթերքի նեղություն է բաշում։ Այդ ժամանակ Պապիկը մի խումբ ղիկված բաջերի գլուխն անցած, ձմեռային դաժան պայ-մաններում, ճեղքում է պաշարման շղթան, պարեն ու հաց ձեռք բերում ու հասցնում յուրայիններին։

Պապիկ փաշան րսավ,— Սուրը բաշեցի,  
Բերթիզ, Քյուրթյուլ, Նետիրլին ալ ձգեցի,  
Պողոտղան աշիրեթը ի հուր վառեցի...<sup>17</sup>։

12 Զեյթունի երգերը, Զեյթունի անցյալն և ներկայն, մ. Ա. էջ 119։  
13 Կիրիկիայում չերեզները հայտնվել էին XIX դարի 50-ական թվականներին։  
14 Զեյթունի երգերը, Զեյթունի անցյալն և ներկայն, մ. Ա. էջ 119։  
15 Նույն տեղում, մ. Ա. էջ 145։  
16 «Զեյթունի պատմագիրք», էջ 346։  
17 Զեյթունի երգերը, Զեյթունի անցյալն և ներկայն, մ. Ա. էջ 145։

Պապիկը վախճանվել է 1886 թ.: Ջեյթունում պատմել են, որ նա իր բրնձան մահով չի մահացել, նրան թունավորել են Կոկիսոնի փոխկուսակալ Ֆելիքի բնի հարսանիքի ժամանակ<sup>18</sup>: Ի դեպ, նույն ճանապարհով են մահացել նրա հորեղբայրը՝ Ենիտյունյան Ջիլ-Փանոս վաշան, 1862 թ. դեպքերի հերոսներից մեկը և նրա կրտսեր եղբայր՝ Նաղարեթ-Չավուշը՝ 1895—96 թթ. կոիվների աքի բնկնող հրամանատարը: Այս միջոցը տեղական հայ աղնվականությանը ոչնչացնելու ձևերից մեկն էր, որը կիրառվում էր օտար բնապետների կողմից և որը արտացոլվել է մեր հայտնի «Մոկաց Միրզա» վիպերգում<sup>19</sup>: Կենդանության ժամանակ Պապիկ փաշան եղել է սիրված ու փառաբանված անձ, իսկ մեռնելուց հետո նրա ղերեղմանը ղեյթունցիների համար դարձել է ուխտատեղի:

Ջեյթունի ռադմական երգերի հաջորդ խումբը կապված է 1895—96 թթ. ինքնապաշտպանողական կոիվների հետ, որոնք հասարակական լայն արձագանք ունեցան: Հերոս լեռնցիները 45 օր ձմեռային դաժան պայմաններում կենաց ու մահու կոիվ էին մղում և հայտնի չէ, թե ինչով կվերջանար այդ կոիվը, եթե չլինեք վեց տերությունների միջամտությունը: «Ջեյթունի այնչափ հարգելի անուն մրն էր, որ Եվրոպան լսեց անոր ձայնը և դայն ջարդե աղատեց ու նույնիսկ փոքրիկ առանձնաշնորհում մը տվավ անոր, այն նույն Եվրոպան, որ ամբողջ Հայաստանի ավերումը լուռ ու մունջ դիտած էր» — գրում էր այս կապակցությամբ Ա. Չոպանյանը<sup>20</sup>:

Ջեյթունի այս կոիվների մասին պահպանված են մի շարք երգեր, ընդարձակ ու ամբողջական. «Ջեյթունի տեսթանը», «Ջեյթունի դովասանքը», «1895 թ. մեծ պատերազմի տասթանը», «Ջեյթունի տասթանը» (թուրքերը և ղեյթունցիները) և «Երգ մը Ջեյթունի լեզվով» (հայերեն): Այս երգերում պատմված է բոլոր քիչ թե շատ նշանավոր մարտերի, գործիչների, հերոսական զրվագների ու դեպքերի մասին: Այսինքն՝ սկսած Բերթիզ-չայի մարտից (Ջեյթունի թուրքական զորանոցի զրավումից) մինչև Սանդուխի ճակատամարտն ու հաշտություն կնքելը:

Բերդիզ-չայի ծիծվիցոնք, իկոնք զրչին կեխիցոնք,  
էսկերնին եսիր առոնք, մեր պայրոխը տրնկիցոնք,  
Փեշեն լսից կատդիցով, իկիվ Ջիրմոկ բնակիցով.  
Սանտոխ հետվուս ծիծվիցով, ի բեզուլ էղցով քեշվիցով...<sup>21</sup>:

Ջեյթունի ռազմի երգերի սեեույալ գաղափարը օտար նվաճողներից հայրենի լեռնաշխարհը պաշտպանելն է: Մեր բազմադարյան բանահյուսությանը այս գիծը բնորոշ է: Որպես հայրենիքի պաշտպաններ, հանգես են դալիս Ջեյթունի շորս թաղապետ-իշխանները՝ Սուրենյանը (Բասիլոսյան), Շավրոյանը, Ենիտյունյանը, Յաղուպյանը, քաջ և հայրենասեր հողեորականները՝ Տելի-Քեշիշը, Բարդուղիմեոս վարդապետը, ժողովրդի ծոցից դուրս եկած մի շարք հերոսները: Իսկ որպես օտար նվաճողներ՝ Մարաշի օսմանյան կուսակալները, հարևան ռազմատենչ աշիրեթներն ու նրանց պետերը: Երգերում վերաբերում են

<sup>18</sup> «Ջեյթունի պատմագիրք», էջ 351:

<sup>19</sup> Մ. Արեղյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 501:

<sup>20</sup> «Անահիտ», 1899, հունվար, էջ 97:

<sup>21</sup> Ջեյթունցի, Ջեյթունի անցյալն և ներկայն, մ. Բ, էջ 77:

ժամանակները, փոխվում են անունները, սակայն ուժերի հակամարտությունը անփոփոխ հարատևում է: «Դա մեր վեպերի էական կողմն է և հայոց պատմության էությունը» — նկատում է Մ. Ռեբդյանը<sup>22</sup>:

Երգերում այս ուժերը պատկերելիս նկատվում է որոշակի գաղափարականացում: Հայրենիքը պաշտպանող ուժը օժտված է առաքինություններով, երդմնապահ է, քաջ, անձնվեր, վեհանձն, ասպետ-ռազմիկ բառի իսկական առումով, մինչդեռ թշնամին հակառակը՝ մեծախոս է ու մեծամիտ, խորամանկ ու վախկոտ:

Զեյթունում ընդունված է եղել հորինել առանձին անհատ հերոսներին նվիրված դուլքի երգեր՝ «Քաջերու անվան ձոնյալ ավաշներ»<sup>23</sup>։ Այդպիսին է «Պապիկ փաշայի վրա» վերնագիր կրող երգը: Այսպես, թեջրլիցիներին օդանության շտապող Յադուպյան իշխանը իր և իր ղինակիցների մասին ասում է.

...Դուն իմ վիճակս դիտես,  
Քանի քանի առյուծներ դուրս կելլան խմբես,  
Աչքս արյուն լեցվեր է, չեմ վախնար մահես,  
Պատերազմը հարսնիք կընդունենք մենք՝ ղեյթունցիք<sup>23</sup>:

Է՛ստ երգի՝ Պապիկ փաշան իրեն այսպես է բնութագրում.

...մեկն ալ չեմ ճանչնար,  
Հալեպի վալիին ականջ չեմ իտար,  
Հարյուր հազար զորք բերես՝ տեղես չեմ երերար,  
Մեղ խոսքերով չեք կրնար առնել, իշխաններ<sup>24</sup>:

1895—96 թ. մասնակիցներն ու հերոսները ետ չեն մնացել իրենց նախորդներին: Փանոս Զուլազյանին (Պապիկի գործակիցներից էր, քաջ մի անձնավորություն, հայտնի Քացոխ-Պինպաշի մականունով) երգը փառաբանում է, հիմք ունենալով նրա կյանքի իրական դեպքերը.

Ես կը գովեմ ղՓանոսն Զուլաքյան,  
Սև ծուխեր իջեցուց թշնամվոյն վրան,  
Զարկավ ճերմակ ձիավորը, առյուծն աննման,  
Շուտ անոր ձին հեծավ, եղավ բերկրալի<sup>25</sup>:

Աչքի ընկնող դեր էր խաղում Զեյթունի պաշտպանության ժամանակ նաև Եղիա Ենիտյոճյանը:

Ենի-Տյունյա Եղիան մեկ թևը կոխեց,  
«Ով սուրբ փրկիչ» րսալ շատ ղինվոր ջարդեց,  
Օսմանյանին ամբողջ բանակը ցնցեց,  
Իետիֆները փախա՜ն և աղատեցան<sup>26</sup>:

<sup>22</sup> Մ. Արևիկյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1966, էջ 53:

<sup>23</sup> Զեյթունցի, «Չեյթոնի անցյալն և ներկայն», մ. Ա, էջ 85:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 145:

<sup>25</sup> Նույն տեղում, մ. Բ, էջ 111:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 111:

Եվ դարձաւ երգերի գաղափարական նպատակադրմանն է ծառայում  
այն, որ դույններ չի խնայվում թշնամու բացասական գնահատականի համար:  
Այսպես, երգը Ազիզ փաշայի մասին Պասում է, թե նա իր զորքի ջարդը տես-  
նելով «Սոսկումեն դետին փովեցավ» և

Փաշային ծունկերուն կապը քակվեցավ,  
Վախ ու սարսափեն լէզին պատռեցավ<sup>27</sup>:

1895 թ. պատերազմում թուրքական բանակի գլխավոր հրամանատար  
Մուստաֆա-Րեմզիի մասին պատմվում է.

Մուստաֆան եմ նաև լացուցիք ինձի,  
Կյանքիս մեջ Զեյթունըն առնել չի կրցի...<sup>28</sup>:

Վերը թվարկած բոլոր երգերում զեյթունցիները հաղթանակ են տանում:  
Այդ հանդամանքը հեռու չէ նաև պատմական ճշմարտությունից:

Երգում Ալի փաշայի արշավանքի մասին՝

Հաղթված փախավ, հազիվ-հազ Մառաշ ինկավ...<sup>29</sup>:

Նույնը և Ղալենտեր, Քյոսե փաշաների արշավանքների վախճանի մա-  
սին: 1862 թ. Ազիզ փաշայի հարձակման արդյունքն է լինում.

Զերքեդաց գլուխը մեկեն ճգմվեցավ,  
Քառսուն հազար զորք էր՝ իսկույն ցրվեցավ<sup>30</sup>:

Իբրև վիպական ժանրի ստեղծագործություններ, Զեյթունի ռազմական եր-  
գերը ունեն մի շարք վիպական մոտիվներ, դժեր և այդ տեսակետից էլ սլահ-  
պանում են հայ բանահյուսության հիմնական ավանդները:

Պատմական ճշմարտություն է այն, որ հատկապես XIX դ. առաջին կեսում  
Զեյթունի վրա ձեռնարկած արշավանքների դրդապատճառը հարկահանու-  
թյունն ու հպատակությունն էր: Հարկահանության մոտիվը, որը իրական  
պատմական արմատներ ունի, տարածված է եղել մեր վիպական բանահյուսու-  
թյան մեջ («Սասնա ծռերը»), ասում է.

Գալենտեր փաշան ալ Զեյթուն արշավեց,  
Տերության հարկը անկե պահանջեց...<sup>31</sup>:

Այդ պահանջով է Զեյթունը պաշարում նաև հուրշիդ փաշան 1860 թ.:  
Ավելի դժվար է լուծվում հպատակության, հնադանդության հարցը: Թշնամին  
դաժան է, իր պահանջները չկատարելու դեպքում սպառնում է ավերել Զեյ-  
թունը: Երգերը պատմում են հուրշիդ, Վեյսի փաշաների և ապա 1895—96 թթ.  
Մուստաֆա-Րեմզի փաշայի սպառնալիքների մասին.

27 Նույն տեղում, մ. Ա, էջ 119:

28 Նույն տեղում, մ. Բ, էջ 108:

29 Նույն տեղում, մ. Ա, էջ 38:

30 Նույն տեղում, էջ 119:

31 Նույն տեղում, էջ 41:

Հարյուր տասը հազար զինվոր կը հանեմ  
Ջեյթունի տեղն ալ դարի կը ցանեմ...<sup>32</sup>

Ջեյթունի երգերում հակառակորդների միմյանց հետ ծաղրանքով ու սպառնալիքով խոսելը նույնպես վիպական բնույթ ունի: Միշտ էլ սպառնալիքը բխել է Ջեյթունի վրա հարձակվողներից, նրանք են եղել սկզբնապատճառը: Մարաշի կուսակալ Վեյսի փաշան ահա թե ինչպես է խոսում զեյթունցիների հետ.

Վեյսի փաշան ըսավ,— Ուլնիա էրթամ,  
Տեղն ավերեմ, ինչքերն ալ ավարի տամ,  
Ջեյթունի վանքն ալ ատեն մը մնամ,  
Հրով կը վառեմ Ջեյթունը, իշխաններ<sup>33</sup>:

Ջեյթունի հերոսի պատասխանը ավելի խիստ է ու անդիջում.

Պապիկ փաշան ըսավ,— Միտքդ պահե քու երգումը,  
Աղբի պարկին մեջ դրի քու դատավորը,  
Մարաշի մեջ չեմ թողուր տաճկին անունը,  
Հրով կը վառեմ Հալեպը, իշխաններ<sup>34</sup>:

Վիպական մոտիվ է նաև փոքրաթիվ զորքով թշնամու մեծաքանակ բանակը, աննշան զոհերի զնով, կոտորելը: Թեջիրլիցիներին օգնության գնացած Տելի-Քեշիշը խրոխտանում է.

. . . . . Ես կովի ելա,  
Անդդ ու ագռավ իջուցի դիականց վրա<sup>35</sup>:

Հայ և բոլոր ժողովուրդների վիպական բանահյուսության մեջ տարածված՝ հերոսների բախտորոշ նշանակություն ունեցող մենամարտերի մոտիվի հետ է կապված Ջեյթունի ռազմի երգերի հետևյալ առանձնահատկությունը: Ջեյթունի հերոսները այնպիսի գործեր են հանձն առնում, որը վճռական նշանակություն է ունենում տվյալ պատերազմի համար: Այսպես, 1780 թ. Օմուր փաշայի արշավանքի մասին պահպանված քառատողը պատմում է զեյթունցի Հակոբի հանդուգն արարքի մասին.

էոմեր փաշան իր աղոթքը կատարեց,  
Խոյեն զնդակ մ'եկավ, հոգին դուրս հանեց,  
Դին վրանին դրան առջև գլտորեց,  
Յագուպ իշխան քաջությունը ցույց տվեց<sup>36</sup>:

Յագուպը (Հակոբը) խոյի մորթ հագած գիշերով մտնում է թշնամու բանակը և առավոտյան աղոթքի ժամանակ սպանում թուրք հրամանատար Օմուր

32 Նույն տեղում, մ. Բ, էջ 101:

33 Նույն տեղում, մ. Ա, էջ 145:

34 Նույն տեղում:

35 Նույն տեղում, էջ 119:

36 Նույն տեղում, էջ 44:

փաշային<sup>37</sup>, լստ զրույցի, Զեյթունի թաղերից մեկի թաղապետությունը հանձնե-  
վում է այս բաշ մարդուն, որին այդ ղեպեից հետո հույ-Հակոբ են կոչում, իսկ  
նրա տոհմը՝ Յաղուպյան<sup>38</sup>:

Նույնպիսի ղեպերի մասին է պատմվում Փյոսե փաշայի 1829 թ. արշա-  
վանքի մասին պահպանված երգի հատվածում:

Զեյթունի բաշ զորքը Կոկիսոն մտավ,  
Փաշային զրոշակիրը անոնց ղեմ կեցավ,  
Յաղուպյան իշխան ճիշտ նշան զարկավ,  
Զինն զտորեկով հոգին զուրս ելավ,  
Փաշային բանակը իսկույն ցրվեցավ<sup>39</sup>:

Ավելի հերոսական ու անձնազոհ արարքի է դիմում ղեյթունցի Մարկոս  
Քաշչյանը, Ազիզ փաշայի 1862 թ. արշավանքի ժամանակ, Այդ արարքի մա-  
սին «Ազիզ փաշայի զաստանում» պահպանված է մի տող:

Տաշչյանը թոփշիին զարկավ տապալեց...<sup>40</sup>

Կրոնական մտայնությունը որոշակի տեղ ունի Զեյթունի ռազմական եր-  
գերում: Զեյթունի վրա կաղմակերպվող թուրքերի հարձակումների մեծ  
մասը բողոքվում էին կրոնական շղարշով, ղեյթունցիները նույնպես պաշտ-  
պանում էին իրենց կրոնն ու հավատը: Այս պատմական ճշմարտությունը ար-  
տացուլել է երգերում, որը կապված է մեր վիպական բանահյուսության  
ավանդների հետ («Կարոս խաչը»): Զեյթունցիներն էլ ունեին իրենց սրբա-  
տեղին, մեր հերոսավեպի Մարութա Բանցրիկ Ասվածածնի նման, որը բացի  
սրբատեղի լինելուց ռազմական նշանակություն ունեցող ամրություն-զորա-  
նոց էր: Խոսքը ս. Աստվածածին կոչված վանքի մասին է, որ ղեյթունցիները  
գիպուկ բնորոշում են տվել. «Վոնք՝ ոսկի թիֆոնք»<sup>41</sup> («Վանք-ոսկի հրացան»):  
Զեյթունցիները կովի էին զնում «Յա սուրբ փրկիչ» կոչելով, նրանք վստահ էին,  
որ կհաղթեն, բանի որ «զեյթունցվոց աղոթքը աստծո հետ կապված է»:  
Փույթ չէ, որ ղեյթունցին (իմա—հայր) թագավոր չունի. «Դուր թագավոր  
ունիք, մենք աստված ունինք» և այլն:

Վիպական երգերի կառուցվածքային բնորոշ առանձնահատկությունը  
զրոնորվում է նաև այս երգերում: Դա զլխավորապես արտահայտվում է ուղ-  
ղակի խոսքի, երկախոսությունների զործածության մեջ, ինչպես, օրինակ.

Շովրոյան կրսե.— Ո՛վ Յուսուֆ վաշա  
Թեճիրցվոց առչե խայտառակ ես եղեր...<sup>42</sup>  
Խուրշիդ փաշան ըսավ.— Ինձ հազար ավաղ,  
Թույլ տվեք զորքերուս զառնալ Ախրըզաղ<sup>43</sup>,  
Սուրենյան ըսավ.— Ով Ֆերիք փաշա,  
Մահդ մոտեցեր է, քանի մ'օր կը մնա...<sup>44</sup>

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 35:

<sup>38</sup> Նույն տեղում:

<sup>39</sup> Նույն տեղում մ. Ա, էջ 46:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 119:

<sup>41</sup> Հ. Ալլահադեգյան, Ուլիա կամ Զեյթուն, Կ. Պոթս, 1864, էջ 143:

<sup>42</sup> Զեյթունցի, Զեյթունի անցյալն և ներկայն, մ. Ա, էջ 86:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 103:

<sup>44</sup> Նույն տեղում, մ. Բ, էջ 101:

Արդեն նշվեց, որ բննարկվող երգերը, բացառությամբ մեկի, որը հորինվել է և երգվել է Ձեյթունի բարրառով, ստեղծվել ու կենցաղավարել են թուրքերեն լեզվով: Եվ չնայած այդ հանգամանքին, նրանք հայ ժողովրդի մի հատվածի ստեղծագործություններն են ու պատկերում են նրա կյանքը, նրա հերոսական պայքարի զրվադները: Այդ երգերի թուրքալեզու լինելը թուրքական հինգդարյա տիրապետության, ազդեցության հետևանքն է, որը երևան եկավ ոչ միայն երգերում, այլև հայ ժողովրդի հողեր կյանքի շատ բնագավառներում: Այդ թուրքալեզու երգերում հետաքրքիր ձևով օգտագործված են բազմաթիվ հայկական բառեր, թուրքական բերականական ձևերով, ինչպես, օրինակ՝ հայլար (հայեր), վանք, պարոն, իշխան, վարդապետ, հայր, հայ, նահատակլար (նահատակներ), զեղան և այլն:

Քանի որ բննարկված նյութը թարգմանական է, համարյա տողացի, ուստի ղժվար է խոսել նրա զեղարվեստա-ոճական առանձնահատկությունների մասին: Մյուս կողմից՝ երգերը որպես տեղական աշուղական ժազում ունեցող ստեղծագործություններ հորինվել են որոշակի կանոններով և նույն կանոնները օգտագործվել են բոլոր զեպքերում: Այդ պատճառով էլ միասնություն է նկատվում հիշյալ երգերի զեղարվեստական լեզվա-ոճական հնարքների մեջ: Երգերի բանահյուսական կյանքը ևս նդել է կարճատև, դրանք երգվել են այնքան ժամանակ, քանի զեռ թարմ է եղել երգի հետ կապված զեպքի ու անձի հիշողությունը: Նոր իրազրությունները և նրա հետ առնչվող երգերը ժողովրդի հիշողությունից զուրս են մղել հներին: Այդպիսին է պատմական երգերի ճակատագիրը՝ րեդհանրապես:

Ձեյթունի ուղմական երգերը տեղի բնակչության համար ունեցել են զեղարվեստական և հասարակական նշանակություն: Խաղաղ օրերին նրանք բավականություն են պատճառել այսպես ասած ղեյթունցիների զեղարվեստական պահանջներին, միաժամանակ վառ պահելով հայրերի քաղազործությունների հիշատակը, իսկ կովի ժամանակ ոգևորել և հաղթանակի առաքելորղել Ձեյթունի մարտիկներին: Ձեյթունը ունեցել է և իր երգեր հորինողներն ու կատարողները՝ բավաշ ասողները: շիշատակություն կա այն մասին, որ բավաշները հորինել են նույնիսկ կովի ղաշտում, զեպքերի անմիջական աղղեցությամբ: Ընդունված է եղել ի լուր թշնամու բարձր ձայնով երգել, թև այսինչ քաշել է հարձակվողը, կովողը, որ եա այսքան քաղազործություններ է կատարել և այլն: Մասամբ զբանով պետք է բացատրել նրանց թուրքալեզու լինելը: Այս հանգամանքին, հավանաբար, նպաստում էր նաև երգերի եղանակը, որը պետք է որ ռազմաշունչ լիներ, ողևորող:

Ձեյթունի ուղմական հրամանատարությունը 1895—96 թթ. կոիվների ժամանակ րնտրել է 120 հոգի բարձր ձայնով բավաշ ասողներ, որոնք միաժամանակ քաշ մարտիկներ էին և ուղարկել վտանգավոր զիրքեր: Սրանք պետք է գիշերները բարձր ձայնով բավաշ ասեին և ղրանով սարսափ աղղերին թշնամու վրա: Այս խմբի մեջ էր Քաշերու անվան ձոնյալ ավաշներ կանչող Աղճապկյան Փանոսը<sup>45</sup>: Այս փաստը լույս է սփռում Ձեյթունի ավաշների կենցաղավարման վրա: Պետք է ննթաղրել, որ բավաշները ոչ թև սովորականի պես երգել են, այլև բարձր ձայնով կանչել ասել, ինչպես թիվ ասելը՝ վիպասների ղարաշրջանում:

45 «Ձեյթունի պատմաղբեր», էջ 615 և ալուր:

Զեյթունի ռազմական երգերը Զեյթունի հերոսական կռիվների յուրահատուկ տարեգրությունն են և միաժամանակ բացահայտում են զեյթունցու կյանքի, կենցաղի ու հոգեբանության մի շարք դժերրու նրանք անխղելի կապերով կապված են հայ ժողովրդական բանահյուսության հետ, կրում են ու շարունակում այդ ավանդները պատմական յուրահատուկ հանդամանքներում:

#### ПЕСНИ ЗЕЙТУНА

А. С. ГАЗИЯН

#### Р е з ю м е

Зейтун—горный район Киликийской Армении, известный как один из очагов освободительной борьбы армянского народа против турецкого ига.

Песни, исследуемые в настоящей статье,—своеобразная летопись освободительной борьбы Зейтуна в XVIII—XIX вв. По жанровому признаку песни Зейтуна преимущественно эпические. Это, в основном, военно-исторические песни местного характера. Их возникновение и распространение связано с героикой Зейтуна. Они имели художественную и общественную значимость.

Своими основными мотивами и идейным содержанием песни Зейтуна продолжают традиции эпического песенного творчества армянского народа в своеобразных историко-социальных условиях.